

գապաց մէջ եւս (Կարբ. Ա, 818): Թէպէտ չենք կարող այս չափազանց մտօք առնուլ մեր այդ յիշած կտակաց «գինին» կամ «առատ ըմպելիքն» ալ, որ կրնան թէ սովորական գիներբուաց նմանիլ վայելողաց կողմանէ, եւ թէ աւելի պարկեշտ լինել, սակայն նոյն միջին դարուն՝ դեռ ուխտավայրից մէջ մեր տեսած արբեցութիւնք (աստ, 253-4) մեր ուշն հոգեհացերուն ալ տանին (հմմտ. 366):

7. — Սովորոյրներ: — Մեր եթէ այդ գինարբուքն իրեն ամբողջական իմաստով առնունք, հոս ալ պիտի տեսնենք աղմուկ ու պարեր (աստ, 204-11), զոր կարքեղոնացիք եւ Անտիոքացիք եւս ունէին իրենց ազապներու մէջ. հեթանոսական մնացորդներ՝ որոց դէմ կը կռուէին իրենց հովիւները (Կարբ. Ա, 818, '22): Եւ նրկատելով ազոնց ժամանակակցութիւնն ու նմանութիւնքը հայ բարուց հետ՝ որուն շատ անգամ ակնարկեցինք, եւ մանաւանդ պարերու գոյութիւնը մեր յուղարկաւորական թարրին մէջ անգամ (Փաւս. 229), բնաւ անտեղի չէ զասոնք մեր հոգեհացըստեան մէջ ալ տեսնել:

Կարեւոր պարագայ մը կայ՝ զոր ոմանք այսօր կը գործադրեն, կ'ըսէ վարդան. այն է «գինի արկանել ի գետին» ի յիշելն